

Անփոփումներ

Տարանցիկ միացումների ուղեգծման ալգորիթմ

Ի. Ա. Կարապետյան

Աշխատանքը նվիրված է հաջորդ կապուղու ստորին միացման գծի հետ ընթացիկ ուղեգծված կապուղու տարանցիկ միացությունների անցկացման (n^{*2}) կարգի բազմանդամային ալգորիթմի մշակմանը:

Ռեսուրսների սահմանափակումները հաշվի առնող ջրաբաշխման դինամիկ մոդել

Յ. Ա. Չարչոյան

Հողվածում ճակերպված և լուծված է տարածաշրջանի ռեսուրսները հաշվի առնող հողատարածությունների օպտիմալ ստուգման ընթացակարգերի որոնման դինամիկ խնդիրը: Խնդիրը բերված է օպտիմալ կառավարման մասնատիկական խնդրի և լուծված է ջրային ռեսուրսների և մասնակի, և համընդհանուր սահմանափակումների դեպքում:

Շոթայի ընդարձակումներ և երկար ցիկլեր գրաֆներում

Շ. Գ. Նիկողոսյան

Աշխատանքում ներմուծվում է գրաֆների մեջ շոթայի ընդարձակման գաղափարը, որի միջոցով ստացվում է գրաֆի մաքսիմալ ցիկլի երկարության նոր գնահատական:

Ժամանակային շարքերի վիճակի փոփոխման պահերի հայտնաբերման ալգորիթմի ծրագրային իրականացումը

Պ. Ա. Պետրոսյան

Նկարագրվում է «Գետստատ» կոմպյուտերային ծրագիրը, որն իրականացնում է պատահական հաջորդականությունների հատկությունների փոփոխման պահերի հայտնաբերման ոչպարամետրական ալգորիթմ: Ծրագիրը կիրառվել է ջրաներկրաբիմիական ժամանակային շարքերի մշակման արդյունքների հիման վրա երկրաշարժերի կանխանշանների հայտնաբերման համար: Նախնական արդյունքները հաջող են:

Հայաստանի ՍՊԱԾ-ի Արարատյան կայանի ջրաներկրաբիմիական տվյալների

վիճակագրական ոչպարամետրական վերլուծություն

Հ. Վ. Ներսեսյան, Ե. Ա. Հարությունյան

Վիճակագրական ոչպարամետրական մեթոդների վրա հիմնված ալգորիթմը կիրառված է Հայաստանի սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության Արարատյան կայանի ջրաներկրաբիմիական տվյալների վերլուծության համար: Արդյունքները համեմատվում են Զաջարան կայանի նախկինում ստացված արդյունքների հետ:

Բնապահպանական նպատակներով *Odagmia Caucasica* Rubz (Diptera, Simuliidae) միջատի բնական պոպուլյացիաների վիճակագրական վերլուծություն

Ս. Գ. Գասպարյան, Է. Ա. Քաչվորյան, Լ. Ս. Միրումյան, Ե. Ա. Հարությունյան

Մարդածին աղտոտվածության տարբեր աստիճանի տարածքներում բնակվող *Odagmia Caucasica* միջատի 12 պոպուլյացիաներում չափված են 13 քանակական ֆենոտրոպ

հատկանիշներ: Վիճակագրական վերլուծության ճանապարհով, օգտագործելով Ստյոտենբիթի հայտանիշը և բաշխումների հիստոգրամները, ի հայտ են բերվել գծային չափսերի և մոդֆունտրիկական ցուցանիշների բաշխումների փոփոխությունները միջատի պոպուլյացիայում՝ կախված շրջակա միջավայրի պայմաններից: Ցույց է տրված մարդածին աղտոտվածության մկատմամբ հետազոտվող միջատի տեսակի բարձր զգայունությունը:

Բաշխված հիերարխիական կեչավորող համակարգի օգտագործումը Web-տրաֆիկի երթուղավորման համար
Ա. Ս. Պետրոսյան

Ներկայումս Internet ցանցի ինֆորմացիոն հոսքերի շարժի վրա մեծ ազդեցություն ունի WWW (Web) ծառայությունը: Այս հոդվածում առաջարկված են առկա TCP/IP երթուղավորման դեպքում կիրառական մակարդակի վրա Web-տրաֆիկի թափանցիկ կեղծ-դինամիկ երթուղավորման մեխանիզմներ, դեպի Internet մի քանի ելքային կապուղիների առկայության դեպքում:

Ցանցային հեռախոսային էլեկտրոնային փոստ
Ա. Ս. Նանասյան, Դ. Ն. Թադևոսյան, Ռ. Ն. Թադևոսյան

Հոդվածում ուշադրություն է դարձվում գոյություն ունեցող ստանդարտ էլեկտրոնային փոստի համակարգի հնարավորություններին և առաջարկվում է լրացնել այն հնարավորությունով՝ ուղարկել/ստանալ ձայնային մամակ Internet ցանցում ամիջապես քաղաքային հեռախոսի միջոցով: Այս հոդվածում ներկայացված է կոմպյուտերային Internet ցանցի և քաղաքային հեռախոսային ցանցի միջեկ իրականացված շլուզը:

UNIMARC վավերագրական ֆորմատի աջակցման միջոցների մշակումը ISITE տեղեկատվական համակարգում
Վ. Գ. Մահալյան, Մ. Լ. Մուքիսայան, Յու. Հ. Շուքուրյան

Դիտարկված է ISITE բաց տեղեկատվական համակարգի կառուցվածքային մոդելը: Տվյալների մատենագիտական հենքեր մուտքի հնարավորության իրականացման նպատակով, այդ համակարգի շրջանակներում կատարվում է UNIMARC նոր վավերագրական տիպի մշակումը:

Elaboration of clients registration mechanisms and collection of statistical dates at the Web Caching Proxy Server
H. V. Ascatryan, A. S. Petrosyan

In the article the system of the WWW servers, advantages of Proxy Servers usage are described, the questions of organization of clients registration and the estimation of transmitting information are worked out. The created software also is described.

Օպտիմալ կառավարման տեսության հիմնական տեսակետների վերլուծություն
Ա. Ս. Շահվերդյան, Ս. Վ. Շահվերդյան

Առկա են օպտիմալ կառավարման տեսության վերաբերյալ հսկայական թվով աշխատանքներ: Հոդվածում վերլուծվում են համարյա բոլորի համար ընդհանուր հիմնական տեսակետները:

**Ինքնատատանվող պրոցեսների լարվածության նվազման մոդելավորումը
ուչգծային RLC պարբերաշրջաններում
Ռ. Ռ. Գյուլբուդաղյան**

Հոդվածում վերլուծված է պարամետրական տիպի ինքնատատանվող պրոցեսները նկարագրող դիմամիկ մոդել: Ուչգծային I պարամետրի ներմուծման շնորհիվ հնարավոր է դարձել վերլուծել ինքնատատանումների լարվածության նվազումը նկարագրող դիմամիկ հավասարումների համակարգը և փոքրացնել ինքնատատանումների պարբերությունների ու ամպլիտուդների արժեքների քազմությունը: Ուչգծայնության գործակիցների վարիացիայի օգնությամբ հնարավոր է դառնում ավելի ճշգրիտ և մանրամասն նկարագրել ուչգծային RLC պարբերաշրջանների որոշ տիպեր և դրանցում տեղի ունեցող ինքնատատանվող պրոցեսների լարվածության նվազումը:

**Բնակչության քաղցկեղով հիվանդացության մակարդակի վրա ուժեղ ստրեսի
ազդեցության վիճակագրական վերլուծությունը**

Ե. Ա. Հարությունյան, Գ. Կ. Բազիկյան, Հ. Վ. Գրիգորյան, Պ. Ա. Պետրոսյան

Աշխատանքի նպատակն է 1988 թ. աղետալի երկրաշարժի ենթարկված Հայաստանի հյուսիսի օրինակի վրա ապացուցել ստրեսային ծանրաբեռնվածության նշանակալիությունը որպես քաղցկեղային հիվանդությունների առաջացման հիմնական պատճառներից մեկը: Կատարված է Գյումրի և Երևան քաղաքների քաղցկեղով հիվանդացության վիճակագրական համեմատական վերլուծություն նախքան ավերիչ երկրաշարժը և դրանից հետո ընկած ժամանակահատվածների համար:

**Արտոնությունների սահմանափակման համակարգի նախագծման և
տեստավորման ինտեգրացված միջավայր տվյալների հենքերի վրա կառուցված
քաշված կիրառություններում**

Ս. Կ. Շուքուրյան, Ա. Մ. Վասիլյան, Ա. Ա. Ավագյան, Ա. Կ. Շուքուրյան

Դիտարկված է քաշված կիրառությունների համակարգերից օգտվելու արտոնությունների սահմանափակման նախագծման և տեստավորման մեթոդիկան: Այն հիմնված է Օպերացիոն Համակարգերի և Տվյալների Բազաների Դեկլարման Համակարգերի (ՏԲԴՀ) արտոնությունների սահմանափակման, ինչպես նաև ժամանակակից ծրագրային միջավայրերի և ֆորմալ վերիֆիկացիայի միջոցով կոմպիլացված մեկ միասնական մեխանիզմի և գործիքային թաղանթի ստեղծման վրա: Դրանք սովորաբար օգտագործվում են իրարից անջատ: Առաջարկված է համապատասխան մոդելը և ՏԲԴՀ-ի համար նրա արտապատկերման մեխանիզմները, հաշվի են առնված նաև այն օգտագործողը, որոնք լինում են գլոբալ համակարգային ցանցի միջոցով:

